




ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ԳԵՈՐԳ. ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱ-
աանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ եւ Կաթու-
ղիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համագ-
գական նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական
Մայր Եկեղեցւոյ Սրբոյ Կաթողիկէ Էջմիածնի.

Գերաշնորհ Եպիսկոպոսաց Եկեղեցւոյ Քրիստոսի կող-
մանցն Միացեալ Նահանգաց յԱմերիկա, Տ. Տ. Ուիլլիամսի
ի Դիտրոյիթ, Լէոնարդի ի Քլիւենդ, Մըկ-Քորմանի ի
Գրանդ-Ռապիդս եւ Ռայլընդրայ ի Ֆիլադելֆիա, Եղբարց
Մերոց ի Քրիստոս Յիսուս եւ վաստակաւոր լծակցացն ի
Տէր՝ Ողջոյն ի Մէնջ Հայրապետական ի համբոյր Սրբու-
թեան, յԱռաքելական Մ. Աթոռոյն Հայաստանեայց Ս. Էջ-
միածնի եւ յամենայն Եկեղեցեացս ի Հայաստան աշխարհի:
Շնորհք ընդ Ձեզ եւ խաղաղութիւն յԱստուծոյ Հօրէ Մերմէ
եւ ի Տեառնէ Յիսուսէ Քրիստոսէ՝ Փրկչէն Ամենեցունցս:

Գոհանամք զԱստուծոյ յամենայն ժամ ի վերայ յի-
շատակաց Ձերոց եւ վասն Ձեր ամենեցուն առնել աղօթս

խնդութեամբ վասն հաղորդութեան Ձերոյ ընդ ամենայն ցաւս և տառապանս, հասեալս ի վերայ հօտին Մերոյ ի սաստկութենէ արհաւրաց աշխարհաստան պատերազմիս այսորիկ և վասն գործոց հաւատոց Ձերոց և վաստակոց Սիրոյ և Համբերութեան առ Հայագին հոգևոր որդիս Մեր, որոց ցրուեալ ի դիպուածոց անցիցն՝ եկելոց ի վերայ մեր ի ծագաց մինչև ի ծագս աշխարհի:

Քանզի գլուխ պատուիրանին Սէր է, ի սուրբ սրտէ և ի մտաց բարեաց և յանկեղծաւոր հաւատոց՝ ապա և Մեք պարծիմք յԱւետարանն, գիտացեալ զՁեզ յաշակերտս Քրիստոսի զեղեալ ի Սէրն յայն: Զի հաւաստի եղաք ընդ ձեռն գրոյ հարազատի Մ. Աթոռոյս, Տ. Արսէն ծ. վարդապետի Վեհուճնոյ, կարգելոյ ի Մէնջ Տեսուչ Եկեղեցեաց Հայոց յԱմերիկա և հովիւ հոգևոր բանաւոր հօտին Մերոյ ի վարդապետութիւն և ի յուսուցումն խորհրդոց Աստուածայնոց և լուաք զվաստակոց Սիրոյ և զգործոց Հաւատոց Ձերոց ի սատարել տարագրեալ որդւոց Մերոց յերկրին Ձերում՝ ի քարոզչութեան Բանին Կենաց, ի հաստատելն Եկեղեցեաց Մերոց, ևս քան զևս ի գործակցութեան Ձերում առ ի շահել զգութ և զողորմութիւն համօրէն մեծի Ազինդ Միացեալ Պետութեանց և սպեղանիս ի վերայ դնել վիրաց բեկելոց սրտիւք և հոգւովք տառապելոց ժողովրդեան Իմոյ՝ ընդ ամենայն տեղիս տէրութեան Տաճկաց:

Ո՛չ երկբայութեամբ մտաց, այլ ստուգութեամբ իրաց աստանօր թուեցից յունկն Ձեր, եղբարք Իմ ի Տէր, զի ի սահմանս ամենայն թիւրքիոյ մատնեցան որդիք Մեր ի ձեռս անօրինաց խստաց և թագաւորի անիրաւի և չարի: Քաղաքք Մեր և աւանք հայաբնակք՝ աւերեալ և կործանեալ յազգաց օտարաց. բարձաւ ամենայն վայելչութիւն յեկեղեցեաց մերոց և սուգ առին ամենայն ճանապահք, զի ո՛չ ևս երթեակ տօնից տարեկանաց նոցա: Ստգտեցաւ պատուէր Տեսուն, եթէ «Մի մերձենայք յօծեալսդ իմ, և մի ի մարգարէսդ իմ մի լինիք շար». զի հաշեցան քահանայք իմ ի լկանաց հալածչաց իւրեանց. կուսանք մեր և երիտասարդք վարեցան ի գերութիւն, տղայք և մանկունք

ստնդեայք զահավէժ եղեն յանդունդս ձորոց, դարձին
գետք զգնացս իւրեանց ի բազմութենէ դիականց արանց
և կանանց: Բազումք ի ժողովրդոց տկարացեալ ի զօրու-
թենէ հոգւոյ և լքեալ յԱւետարանն՝ կանխեցին ուրանալ
զլուսաւոր հաւատս իւրեանց ի խնդիր կենաց և ի գինս
հացի, զի արկ նեղիչն զձեռս իւր զնոքոք և ծանրա-
ցոյց զլուծ ամբարշտութեան իւրոյ ի վերայ պարանոցի
նոցա, որոց ամենայն գլուխ ի ցաւ և ամենայն սիրտ
ի սրտմտութիւն, որոց և հալածական եղեալ ի բնագա-
ւառաց հայրենի ընդ անապատս հարաւոյ և ընդ անջրը-
տիս, մատնեալք ի սուր և ի գերութիւն, ի սով և ի պա-
պակումն ծարաւոյ: Եւ բիւրք ի բիւրոց, այրիք և ուրբք ի
փախուստ անկեալ ի կողմանս Կովկասու գտին տեղի ապաս-
տանի ընդ հովանեաւ Մ. Աթոռոյս և ընդ թևովք Հայրա-
պետարանիս: Լուարո՞ւք, եղբարք իմ, ի Տէր Յիսուս և ամե-
նայն եկեղեցիք Ձեր ընդ Ձեզ և հայեցարուք, եթէ իցեն
երբէք ցաւք ըստ ցաւոցս լեալ, որ ի վերայ Մեր հասին:

Յայսմ մեծի թշուառութեան ժողովրդեան Իմոյ և ի
տրտմութեան Մերում, յորմէ հանդարդիլ ոչ կարեմք,
տեսանեմք ի Ձեզ և յեկեղեցիս ընդ տեսչութեամբ Ձերով
մխիթարիչս և բարեկամս, զի քաղցեաք և ետուք մեզ
ուտել, ծարաւեցաք և արբուցիք զմեզ, օտար էաք և ժո-
ղովեցէք զմեզ, մերկ էաք և զգեցուցէք, հիւանդ էաք և
ի բանտի և տեսէք զմեզ: Վասն այսորիկ գոհանամք զԱս-
տուծոյ ի վերայ շնորհացն, որ տուեալ են Ձեզ ի Յիսուս
Քրիստոս, զի յամենայնի մեծացարուք Դուք նովաւ և
զօրասլիք կատարել մինչև ցվախճան զգոշծս բարեաց,
զորս ցուցէք ժողովրդեանս Իմում և բառնալ զտկարու-
թիւն տկարացն յաւուրս նեղութեան մերում, զի բանն
Տեառն ընթանայցէ և փառաւոր լինիցի յամենայն տեղիս
բնակութեան մերոյ և ապրեսցուք մեք յանօրինաց և մի
խախտեսցի ի հիմանց ընդ Արևելս՝ ի դրունս հնոյ աշխար-
հին առաքելաշաւիղ եկեղեցիս Հայաստանեայց, որոյ ի
նախկին դարուց անդի շաղախմամբ արեան Նահատակաց
Քրիստոսի անսասան հաստեալ ի վերայ Վիմին հաւատոյ:

և Դուք, եղբարք իմ ի Քրիստոս Յիսուս, արթուն և զուարթունք ընդ Մեզ եղիջիք և զգեցցուք զսաղաւարտն Յուսոյն փրկութեան, զի տայէ Տէր Աստուած շնորհս օգնականութեան Ձեզ՝ ի ձեռն Տեառն Մերոյ Յիսուսի Քրիստոսի, ձգել ձեռն օգնականութեան, զի մի ջնջեսցի իսպառ յերեսաց երկրի ազգն Հայոց ի սահմանս իշխանութեան մահմետականաց:

Եւ ինքն Տէր իսաղաղութեան տայէ Ձեզ իսաղաղութիւն յամենայն ժամս և յամենայն իրս, և Տէր ընդ ամենեւին ընդ Ձեզ: Ամէն:

Գ Է Ո Ր Գ Ե.

ԿԱԹՈՒՂՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ի 21 մարտի 1916 ամի

ըստ տոմարիս ՌՅԿԵ

ի Հայրապետութեան Մերում Ե. ամի

յԱյրաքատեան Մայր Աթոռ

Ս. Էջմիածնի

ի Վաղարշապատ

Թ. 670

Գ Է Ո Ր Գ. ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ ԵՒ ԱՆՀԱ-
սանելի կամօքն Աստուծոյ Եպիսկոպոսապետ Եւ Կաթողիկոս Ամենայն Հայոց, Ծայրագոյն Պատրիարք Համագրական Նախամեծար Աթոռոյ Արարատեան Առաքելական Մայր Եկեղեցւոյ Մերոյ Կաթողիկէ Էջմիածնի.

Արժանապատիւ վիճակաւոր Քահանայից Մերոց, զգօն հոգաբարձուաց և անդամոց Խորհրդարանաց Եկեղեցեաց, բարեջան Երեցփոխանաց, շնորհունակ սարկաւակաց, համեստափայլ և ժրաջան Տիկնանց, մաքրակենցաղ և շնորհափայլ կուսանաց, աշխատասէր վաճառականաց, հոգածու անդամոց կրթական, բարեգործական, որբախնամ և այլ Աստուածահաճոյ հաստատութեանց, քրթնաթոր արհեստաւորաց և առհասարակ ընդհանուր հաւատացելոց Հայկազեան սեռի արանց և կանաց, ծերոց և տղայոց,

մեծի և փոքու, ամենեցունցդ, որ ի մէջ այլալեզու և տարա-
կրօն ազանց, հոգևոր դաւակաց մերոց և հարագատ Որդւոց
Մօրս Մերոյ լուսոյ, որ ի սահմանս աշխարհին Հնդկաց և
ի կղզիս սահմանամերձ՝ ողջոյն սիրոյ հասցէ ի Միածնաէջ
Ս. Կաթողիկէ Մայր Տաճարէս, ի Ս. Լուսաւորչէն Մերմէ
և ի Մէնջ, որ Գլուխ եմք լրութեան ազգիս և Հօտապետ
եկեղեցւոյս. Ամէն:

Ո՛ր տայր զաչս իմ աղբիւրս արտասուաց և լայի գժո-
ղովուրդ իմ զտիւ և զգիշեր, և ողբայի զվիրաւորեալ որդիս
իմ և զդստերս. ո՛ր տայր ինձ դոյզն ինչ օթեան յանապատս
Միջօրէից, յայց ելանել տարագիր որդւոց իմոց սիրելեաց
և բան սփոփանաց յունկն նոցա խօսել, բարբառ քաջալե-
րութեան ի սիրտ նոցա և ի հոգի յեղուլ, զի մի իսպառ
լքեալ ի բեկմանէ որ ի վերայ եհաս, յաղթահարեսցի ի տա-
ռապանացն և ի տուայտութեանց:

Որդիք իմ տարագիր ի հայրենի ժառանգութենէ նշա-
ւակ անօրինին եղեն և ցրուեցան ի վերայ երեսաց երկրի.
մտին որդիք ժանդ անօրինին ի ժառանգութիւն հարցն
մերոց և յաւեր դարձուցին զնա. պղծեցին զտաճարս մեր
սուրբ և զեկեղեցիս մեր որպէս զհիւղս մրգապահաց արա-
րին: Արկին զղիակունս ծառայից և պաշտօնէից Տեառն
զէշ թռչնոց երկնից և զմարմինս հարց մերոց և քերց,
դստերաց մերոց և զաւակաց ի կեր զազանաց երկնի վայրի:
Հեղին զարիւն նոցա, որպէս զջուր և ի կարմրութենէ
արեան նոցա ի բոսոր փոխեցան գետք ամենայն. ոչ ոք էր
որ թաղէր զղիս նոցա. ի բազմութենէ դիականց գետք
զգնացս իւրեանց յետս դարձուցին: Եղեն դիակունք մեր
իբրև զխոտ, որ զկնի հնձողի. և ոչ ոք էր, որ ժողովէր
զնոսա: Ալիք եփրատայ և կոհակք Տիգրիսի հանապազ
զմարմինս անշունչս լուանային հօտին Մերոյ ի լուացունմ
նահատակաց. ապականեցաւ երկիր մեր իսպառ և ոչ գտաւ
էրէ իսկ վայրի, որ արածէր ի նմա, զի սուր թշնամւոյն
առհասարակ եկեր զորդիս իմ և զամենայն շունչ կենդա-
նի և ոչ ոք էր որ զայր ի թիկունս օգնականութեան և բա-

գուկ Տեառն ծանրացաւ ի նոսա: Եղաք մեք նախատինք դրացեաց մերոց և ծաղր կատականաց որդւոց անօրինին. և ասացին հեթանոսք, «Ո՞ւր է Աստուած նոցա, որ փրկեացէ զնոսա ի ձեռաց մերոց. մաշեացուք զնոսա ի սուր և ի հուր, մինչև խալառ չքացի արմատ կենաց և գոյութեան նոցա»:

Այլ արդ, որդիք իմ հարազատք և զաւակունք իմ հոգևորք, լուարուք ձայնի իմում և պատգամաց որ առ ձեզդ խօսիմա: Աղաչեցի ես առ Տէր ի հեծութեան իմում և խնդրեցի. «Ծանո՞ ինձ Տէր և ծանեայց զճանապարհս յապրեցուցանել ի նեղութենէ զժողովուրդ իմ, որ յիս հաւատացաւ ի Քէն, զի զչարիսն փոխանակեացի ի բարի և աւեր նոցա ի շինութիւն, և սպառումն նոցա ի բազմացումն»:

Ձայն Տեառն առ իս և ասէ. «Ահա ե՛ս լնում զերկիրքս աւերակ և զբնակիչս երկրիդ կրկին ածից և կեցուցից զնոսա. յարուցից նոր Յեսու, որ առաջնորդեացէ զնոսա վերստին ի յարկս բնակութեանց իւրեանց և ի տաճարս նոցա կրկին ունկնդիր աղօթից նոցա եղիցից. զթացայց և ողորմեցից ի նա և այլ ևս մի կորացի ժողովուրդ քո. զի յարուցից զորդիս որդւոց քոց, որք ՚ի տար աշխարհ և ընդ օտար երկնովք և աստեղօք և նոքա եկեացեն յօգնակահութիւն: Մի անխայեացեն նոքա յաղքատն և ի տնանկն և զանձինս տնանկաց կեցուցեն, զի տնանկքդ եղբարք համարիւնք և քորք համասեռք են նոցա. ծագեացի կրկին արեգակն արդարութեան ի վերայ մնացորդաց նոցա ի ձեռս օտարաց, զի մարդասիրութիւն և գութ ոչ զիտէ համասեռից ծննդեան տարբերութիւն: Եկեացեն որդիք Քո, որ յերկիր օտար յօգնականութիւն Մօրն իւրեանց սգազգեստի և վերստին նորոգեացեն զնա, դարձուցեն զսուգ նորա յուրախութիւն և զաւեր նորա ի պտղաբերութիւն»:

Վասն այդորիկ ահաւասիկ առաքեմ առ ձեզ զհրեշտակ իմ, զԳերապատիւ Տ. Թորգոմ եպիսկոպոսն, զառաջնորդ հօտին Մերոյ, որ յեգիպտոս, նա պատմեացէ ձեզ մի ըստ միոջէ ամենայն. յորդոր կարգամք սիրելեացդ մերոց, մեծաց և փոքունց, արանց և կանանց, սիրով դնել ունկն խրախուսական բանից նորա և յորդորանաց և ձեռն

օգնականութեան կարկառել առ ի վերստին շինել զՀայ-
րենեացն մեր աւեր, կրկին կանգնել զտաճարս մեր ի
փառաբանութիւն անուան Տեառն, բանալ զդպրանոցս մեր
յուսումն կրթութեան և դաստիարակութեան, ունել ապաս-
տանարանս Որբոց, տունս ապաւինի ծերոց և այրեաց,
վայրս ասպնջականս անոքից և հիւանդաց, զի աչք Տեառն
կրկին հայիցէ առ մեզ քաղցրութեամբ և բազուկ նորա
զօրաւիգ լիցի հօտին իմոյ ի դառնալն նոցա ի յարկս իւր-
եանց աւեր և անշէնս:

Զմտաւ ածէք, զաւակունք իմ հոգեւորք, զնախնեացն
ծերոց գործք հոգեւոր արութեան, որ զհետ հաճոյից սրտից
իւրեանց գնացին և ոչ անխայեցեն ամենեկին զտուրս լիա-
ռատ՝ զկարօտութեանն Հայրենեաց իւրեանց լցուցանել,
որք ընդ օտար աստեղօք՝ այլ ոգիք նոցա զՀայրենեացն
կայր մածեալ, ընդ օտարազինս դեգերեալ, այլ ոչ երբէք
մոռանային զՄայրն իւրեանց Լուսոյ, ընդ այլասեռ և
տարակրօնս վարելով կենցաղ, այլ ոչ ամենեկին թագու-
ցանէին զկայծ բորբոք Յուսոյ, անթեղեալ ի սիրտ նոցա.
հոգի նոցա միշտ ընդ համազինս, միտք նոցա հանապազ
առ համարիւն իւրեանց եղբարց բարօրութիւն: Տուրք
նոցա ոչ երբէք կասեցան ի հոսանից, ձախ նոցա ոչ երբէք
գիտաց զինչ գործ գործեաց աջ նոցա ի սփոփումն մեր-
ձաւորի, ի խնամածութիւն կարօտելոյն, ջուր դառնութեան
վշտագնելոյն ի քաղցրութիւն սննդեան փոխեցաւ ի ձեռն
նոցա: Յուցէք զանձիս ձեր որդիս արժանի նախնեաց ձե-
րոց արժանաւորաց ըստ տրոցդ և ըստ սիրոյն, որ առ մերս
հանրական գործ:

Արիք, եկայք որդիք Մեր հոգեւոր, շուրջ պատեցէք
զհրեշտակիւ Մերոյ, նուիրակիս և հոգեւոր տնտեսիս, բա-
ցէք զդուռն առատ տրից առ ի լցուցանել զընդհանուր
կարիս ազգիս մերոյ տառապելոյ, զի մի պարծեսցի հօրն
ի զօրութիւն իւր, եթէ մի այլ ևս կանգնեսցի վերստին
աւերեալն ի ձեռս իմ, այլ իմաստութիւն տկարացն պան-
ծասցի, եթէ Տէր է որ շինէ, Աջ Ամենակալին է, որ կանգ-
նէ, Կամք Տեառն է, որ առաջնորդէ զտկարացն գնացս:

Իսկ Մեք, որ Գլուխ եմք լրութեան ազգիս՝ աղօթեմք
առ Տուիչն ամենայն բարեաց տալ առատապէս պարգևա-
բարեաց այնոցիկ, որք ոչինչ խնայեցին կարօտելոյն, յոր-
դորեմք ոչ երբէք լքանիլ ի նեղութեանս, զի յուսով կամք
ակնդէդ առ երջանիկն ապագայ և սիրով և համբերու-
թեամբ աղաչեմք զամենեսեանդ տանել զխաչ մեր և
զբաժակ դառնութեան: Հաւատամք եթէ այցելութեամբ
այց արասցէ մեզ Աստուած և սլահպանեսցէ զորդիսդ իմ
սիրելիս ի Տէր: Ամէն:

Գ Է Ո Ր Գ Ե.

ԿԱԹՈՒՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈ

ի 22 մարտի 1916 ամի

ըստ տոմարիս ՌՅԿԵ

ի Հայրապետութեան Մերում Ե. ամի

յԱրարատեան Մայր Աթոռ

Ս. Էջմիածնի

ի Վաղարշապատ

Թ. 902

ՆՈՐԻՆ ՎԵՀԱՓԱՌՈՒԹԵԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սի-
նօղին Ամերիկայի Պրէնթֆօրտ քաղաքի «Բիլի Խօսնակ
զիւղի Ուսումնասիրաց Ընկերութեան» փոխադրած վեց
հարիւր (600) ռուբլին, պատուիրելով մուծել մատեան
յօգուտ կամաւորների և անդորրագիրն ուղարկել ըստ
պատկանելոյն: 1 փետուարի, Թ. 215:

Նորին Սրբութեան մակագրութեամբ յանձնուեց Սի-
նօղին Ս. Էջմիածնի Եղբայրական Օգնութեան Յանձնա-
ժողովի ներկայացրած 437 փ. ալիւրի վաճառումից գոյա-
ցած մի հազար երեք հարիւր երկու (1302) ռուբլին,
պատուիրելով մուծել մատեան յօգուտ հայ գաղթական-
ների: 1 փետուարի, Թ. 216: